ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ N 304 -Լ

«22» ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2023թ.

ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՄՇՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ, ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 5-Ի ԹԻՎ 74 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարելով «Տարածքային կառավարման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի, 19-րդ հոդվածի, «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» օրենքի 15-րդ հոդվածի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով՝

Որոշում եմ՝

1. Հաստատել Վայոց ձորի մարզի արտակարգ իրավիճակների մշտական գործող հանձնաժողովի կազմը՝ համաձայն հավելված 1-ի:
2. Հաստատել Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի արտակարգ իրավիճակների հանձնաժողովի կանոնադրությունը՝ համաձայն հավելված 2-ի:
3. Ուժը կորցրած ճանաչել ՀՀ Վայոց ձորի մարզպետի 2010 թվականի օգոստոսի 5-ի թիվ 74 որոշմամբ հաստատված «Վայոց ձորի մարզի արտակարգ իրավիճակների մշտական գործող հանձնաժողովի կազմը, կանոնադրությունը հաստատելու» մասին որոշումը:
4. Որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Recoverable Signature

X

Signed by: KOLYA MIKAELYAN 3507670100

Կ. ՄԻՔԱԵԼՅԱՆ

ք. Եղեգնաձոր

Հավելված 2

ՀՀ Վայոց ձորի մարզպետի

2023թ. դեկտեմբերի 22-ի

N 304 որոշման

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արտակարգ Իրավիճակների հանձնաժողովի

1.Ընդհանուր դրույթներ

Վայոց Ձորի մարզի Արտակարգ Իրավիճակների հանձնաժողովը (այսուհետ ԱԻՀ) հանդիսանում է մշտական գործող, արտակարգ իրավիճակներում բնակչության և տարածքների պաշտպանության խնդիրների լուծմամբ զբաղվող մարմին:

ԱԻՀ-ն ապահովում է Վայոց Ձորի մարզի, նրա համայնքների և օբյեկտների բնակչության պաշտպանության համակարգի կայունությունը, կառավարման կառուցվածքի կատարելագործումը, խոշոր վթարների և արտակարգ իրավիճակների (այսուհետ ԱԻ) կանխարգելմանն ու հետևանքների վերացմանն ուղղված ուժերի և միջոցների պատրաստականությունը, ինչպես նաև գնահատում է ԱԻ-ի պատճառած վնասի չափը:

ԱԻՀ-ի նախագահը ի պաշտոնե հանդիսանում է մարզպետը, իսկ տեղակալներ՝ հաստիքային տեղակալը (տեղակալներից մեկը՝ մարզպետի որոշմամբ), Վայոց Ձորի մարզային փրկարարական վարչության (այսուհետ ՄՓՎ) պետը, Արարատի զինվորական կայազորի պետը:

ԱԻՀ-ը մարզպետի կարգադրությամբ, իրավունք ունի կատարել ուսումնասիրություններ Վայոց Ձորի մարզի բոլոր օբյեկտներում, իրականացնել վերահսկողական մեթոդական գործունեություն, կազմել ակտեր այդ օբյեկտների կողմից տարերային և տեխնածին բնույթի արտակարգ իրավիճակներից բնակչության և տարածքների պաշտպանության համար ձեռնարկված միջոցառումների վերաբերյալ:

Հանձնաժողովի նիստերը հիմնահարցերի վերաբերյալ անցկացվում են եռամսյակը մեկ, իսկ ընթացիկ հարցերի վերաբերյալ՝ ըստ դրանց առաջացման անհրաժեշտության:

ԱԻՀ-ն իր գործունեությունն իրականացնում է ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, սույն կանոնադրությամբ և արտակարգ իրավիճակների կանխարգելմանն ու վերացմանն ուղղված այլ օրենսդրական ակտերով:

ԱԻՀ–ի որոշումները ենթակա են մարզպետի հաստատմանը և պարտադիր են մարզի տեղական ինքնակառավարման մարմինների, մարզի տարածքում գտնվող բոլոր ձեռնարկությունների, կազմակերպությունների և հիմնարկների համար՝ անկախ նրանց գերատեսչական պատկանելիությունից և սեփականության ձևից:

Արտակարգ Իրավիճակների Հանձնաժողովը.

- համակարգում է մարզի տարածքում գտնվող կազմակերպությունների, հիմնարկների և ձեռնարկությունների գործունեությունը՝ ԱԻ–ում գործելու, արտակարգ իրավիճակների կանխարգելման և հետևանքների վերացման ուղղությամբ.
- մասնակցում է ԱԻ–ի կանխարգելմանն ու հետևանքների վերացմանն ուղղված ծրագրերի մշակմանը և իրականացմանը.
- զանգվածային լրատվության և այլ միջոցներով ԱԻ–ից բնակչության և տարածքների պաշտպանության վիճակի և անվտանգության ապահովման ուղղությամբ ձեռնարկված միջոցառումների վերաբերյալ բնակչությանն ապահովում է հավաստի և օպերատիվ տեղեկատվությամբ.
- ստեղծում է արտաբյուջետային պահուստային հիմնադրամներ՝ ԱԻ–ի կանխարգելման և հետևանքների վերացման, վթարա-վերականգնողական կազմավորումների ապահովման համար.
- ղեկավարում է բնակչության և կառավարման մարմինների ԱԻ – ում գործելու պատրաստականության բարձրացման գործընթացը:

2. ԱԻՀ – ի խնդիրները, գործառույթները և իրավունքները

2.1 ԱԻՀ – ի հիմնական խնդիրներն են՝

-
- տարերային և տեխնածին բնույթի ԱԻ- ից բնակչության և տարածքների պաշտպանությունը կանոնակարգող օրենքների և այլ նորմատիվային ակտերի կատարման կազմակերպումը.
- ԱԻ–ի կանխարգելման միջոցառումների, նրանց հետևանքների նվազեցման, ԱԻ–ի պայմաններում պոտենցիալ վտանգավոր (հրդեհավտանգ, պայթունավտանգ, հիդրոտեխնիկական և այլն) օբյեկտների աշխատանքի հուսալիության ապահովման միջոցառումների կազմակերպումը և հսկողությունը.
- տարածքների և պոտենցիալ վտանգավոր օբյեկտների վիճակի հսկողության իրականացումը, ԱԻ – ի կանխատեսումը.
- Վայոց Ձորի մարզում կառավարման մարմինների մշտական պատրաստականության կազմակերպումը.
- ԱԻ–ի կանխարգելմանն ուղղված գիտատեխնիկական հետազոտությունների իրականացման և ծրագրերի մշակման աշխատանքների համակարգումը.

- Վայոց Ձորի մարզի կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, ուժերի և միջոցների պատրաստման կազմակերպումը, ԱԻ – ի առաջացման կամ սպառնալիքի դեպքում բնակչության պաշտպանության ձևերի և մեթոդների ուսուցումը.
- ԱԻ կանխարգելման և հետևանքների վերացման ուղղությամբ որոշումների նախագծերի մշակումը.
- մասնակցությունը մարզի տարածքում պոտենցիալ վտանգավոր օբյեկտների տեղաբաշխման և գործունեության կազմակերպմանը վերաբերող հարցերի քննարկմանը.
- ԱԻ–ի կանխարգելման և հետևանքների վերացման միջոցառումների անցկացմանը հասարակական կազմակերպությունների և քաղաքացիների ներգրավման աշխատանքների կազմակերպումը:

2.2 ԱԻՀ – ի գործառույթները

-

Տեխնածին, բնապահպանական և այլ աղետների առաջացման, ճառագայթային, կենսաբանական, հիդրոօդերևութաբանական իրադրության վատթարացման սպառնալիքի դեպքում ԱԻՀ – ը՝

- անհրաժեշտության դեպքում ձևավորում է օպերատիվ խմբեր՝ իրադրության վատթարացման պատճառների պարզաբանման և կարգավորելուն ուղղված առաջարկությունների մշակման նպատակով.
- ուժեղացնում է պոտենցիալ վտանգավոր օբյեկտներում վիճակի դիտարկումները և հսկողությունը, կանխատեսում է ԱԻ – ի առաջացման հավանականությունը և հետևանքները.
- միջոցներ է ձեռնարկում հնարավոր ԱԻ–ի վերացման համար նախատեսված ուժերի և միջոցների պատրաստականության բարձրացման և անհրաժեշտության դեպքում դրանց ենթադրվող գործողությունների շրջան տեղափոխման ուղղությամբ.
- ստեղծում է մամուլի խումբ, հասարակայնության և զանգվածային լրատվության միջոցների հետ կապի ապահովման նպատակով:

ԱԻ – ի առաջացման և հետևանքների վերացման դեպքում ԱԻՀ–ը՝

- կազմակերպում է կառավարման մարմինների, հիմնարկների, կազմակերպությունների, ձեռնարկությունների և բնակչության ազդարարումը ԱԻ–ի մասին.
- աղետի գոտի է ուղարկվում ԱԻՀ–ի օպերատիվ խումբ, իսկ անհրաժեշտության դեպքում նաև շարժական կառավարման կետ.
- կազմակերպում է հասարակական կարգի պահպանությունը, հրդեհների շիջումը, նյութական և մշակութային արժեքների պահպանությունը.

- կազմակերպում է կառավարման կետերի ծավալումը, անհրաժեշտ ուժերի և միջոցների օպերատիվ ներգրավումը և դրանց արդյունավետ օգտագործումը աղետի գոտում.
- կազմակերպում է ԱԻ–ի հետևանքների ուսումնասիրումը և գնահատումը, դրանց վերացումը, նյութատեխնիկական պաշարների նպատակահարմար օգտագործումը.
- կազմակերպում և համակարգում է աղետի գոտուց բնակչության տարահանման գործողությունները և տուժածներին անհրաժեշտ առաջնահերթ օգնության ցուցաբերումը.
- կազմակերպում է կազմակերպություններից և քաղաքացիներից (այդ թվում նաև արտասահմանյան) որպես օգնություն աղետի գոտի մուտք գործող նյութական և ֆինանսական միջոցների հաշվառումը և բաշխումը.
- համակարգում է աղետի գոտում բնակչության անհետաձգելի բուժօգնությունը, հիգիենիկ-հակահամաճարակային և կենսապահովման միջոցառումները.
- մասնակցում է ԱԻ–ի պատճառների բացահայտմանն ուղղված պետական հանձնաժողովների աշխատանքներին.
- ապահովում է կառավարման մարմինների տեղեկացումը աղետի գոտում իրադրության ու աշխատանքների ընթացքի մասին և զանգվածային լրատվության միջոցներով տեղեկացնում է բնակչությանը.
- իրականացնում է հսկողություն զանգվածային լրատվության միջոցներով ԱԻ–ի մասին տեղեկությունների տարածման ընթացքի նկատմամբ: Միջոցներ է ձեռնարկում կեղծ, չստուգված, խուճապային լուրերի և հաղորդակցությունների տարածման արգելման ուղղությամբ:

2.3 ԱԻՀ – ի իրավունքները՝

- ԱԻՀ-ն իր խնդիրների կատարումն ապահովելու նպատակով իրավունք ունի՝

- Մարզի կազմակերպությունների և ձեռնարկությունների առաջատար մասնագետներին ներգրավել պոտենցիալ վտանգավոր օբյեկտների նախագծերի փորձաքննությանը, օբյեկտների անվտանգության ապահովման հսկողությանը.
- մասնակցել արտադրական օբյեկտների կառուցապատման, տեղաբաշխման սխեմաների ու նախագծերի, տնտեսական և սոցիալական զարգացման ծրագրերի մշակմանն ու քննարկմանը.
- սահմանված կարգով ներգրավել ուժեր ու միջոցներ փրկարարական և այլ անհետաձգելի աշխատանքների կատարման համար.

- մարզպետին ներկայացնել առաջարկություն՝ ԱԻ–ի ծագման դեպքում մարզում գտնվող արտադրական օբյեկտների (անկախ սեփականության ձևից) գործունեության դադարեցման մասին:

ԱԻ – ի սպառնալիքի և առաջացման դեպքում.

- մարզում կամ առանձին համայնքներում սահմանել բնակչության պաշտպանության համակարգի աշխատանքային ռեժիմները.
- ուժեղացնել աղետի գոտում հասարակական կարգի, խոշոր ֆինանսական և նյութական արժեքների կենտրոնացման վայրերի, բնակչության կենսագործունեությունն ապահովող օբյեկտների պահպանությունը.
- ԱԻ–ի կանխարգելման և հետևանքների վերացման համար օգտագործել նյութատեխնիկական, բժշկական, պարենային և այլ պաշարներ.
- անհրաժեշտության դեպքում աղետի գոտում սահմանել ձեռնարկությունների և հիմնարկությունների, ինչպես նաև բնակչության կենսագործունեության հատուկ ռեժիմներ.

3. Արտակարգ Իրավիճակների հանձնաժողովի կազմը

ԱԻՀ–ի կազմի մեջ են մտնում մարզպետի աշխատակազմի վարչությունների և առանձին բաժինների ղեկավարներ, հանրապետական գործադիր մարմինների տարածքային ստորաբաժանումների ղեկավարներ, մարզի բնակչության առաջնահերթ կենսապահովման կազմակերպությունների և հիմնարկների ղեկավարներ, ուժային կառույցների ղեկավարներ:

Աշխատանքի «ամենօրյա», «ուժեղացված» և «արտակարգ» ռեժիմների պայմաններում խնդիրների լուծման համար աշխատանքային մարմիններ են հանդիսանում.

- մարզային փրկարարական վարչությունը
- մարզի տարահանման հանձնաժողովը:

4. ԱԻՀ – ի աշխատանքների կազմակերպումը

ԱԻՀ–ի նախագահը անձնական պատասխանատվություն է կրում հանձնաժողովի վրա դրված խնդիրների կատարման համար: Կատարում է աշխատանքի բաժանում ԱԻՀ–ի անդամների միջև: ԱԻՀ–ի աշխատանքները կազմակերպվում են աշխատանքային ծրագրերի հիման վրա: ԱԻՀ–ի նիստերը ձևակերպվում են արձանագրություններով:

ԱԻ–ի առաջացման դեպքում ձևավորում է շտաբ, որը ղեկավարում է ներգրավված կառավարման մարմինների, ուժերի և միջոցների գործողությունները աղետի գոտում: Կախված ստեղծված կոնկրետ իրադրությունից, ԱԻՀ–ը՝ նախագահի կամ նրա տեղակալի որոշմամբ, անցնում է աշխատանքի «ուժեղացված» կամ «արտակարգ» ռեժիմի:

ԱԻՀ–ի որոշմամբ՝ ԱԻ–ի վերացմանը ներգրավվում են մարզի տարածքում գտնվող՝

- քաղաքացիական պաշտպանության ուժերը,
- ճառագայթային, քիմիական և մանրէաբանական իրավիճակի մշտական հսկողության համակարգի հիմնարկությունները.
- ՀՀ ՆԳՆ ոստիկանության Վայոց Ձորի մարզային վարչության ուժերն ու միջոցները.
- գերատեսչական վթարավերականգնողական և հակահրդեհային կազմավորումները.
- անհետաձգելի բժշկական օգնության կազմավորումները.
- մշտական պատրաստականության վթարա-փրկարարական կազմավորումները:

Մարզպետի հայտով փրկարարական աշխատանքներին կարող են ընդգրկվել նաև ՀՀ ՆԳՆ Հայաստանի փրկարար ծառայության փրկարար ջոկատները, ինչպես նաև ՀՀ ՊՆ ստորաբաժանումները՝ համաձայն փոխգործողությունների պլանի:

Կամավորական սկզբունքով արտակարգ իրավիճակների հետևանքների վերացմանը ներգրավվում են հասարակական կազմակերպությունները և բնակչությունը:

Հավելված 1
ՀՀ Վայոց ձորի մարզպետի
2023 թ. դեկտեմբերի 22-ի
N 274-Ա որոշման

Վայոց ձորի մարզի արտակարգ իրավիճակների մշտական գործող հանձնաժողովի կազմը

Հանձնաժողովի նախագահ ---- մարզպետ
Հանձնաժողովի նախագահի տեղակալ ---- Արարատի զինվորական կայազորի պետ
Հանձնաժողովի նախագահի տեղակալ ---- մարզպետի տեղակալ
Հանձնաժողովի նախագահի տեղակալ ---- մարզային փրկարարական վարչության պետ

Հանձնաժողովի անդամներ

-- մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղար
-- մարզային դատախազ
-- ազգային անվտանգության մարզային վարչության պետ
-- ոստիկանության մարզային վարչության պետ
-- մարզային փրկարարական վարչության պետի տեղակալ
--մարզպետի աշխատակազմի տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերի վարչության պետ
-- մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ
--մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության պետ
--մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության գլխավոր մասնագետ
--մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության պետ
-- մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ
-- մարզպետի աշխատակազմի զարգացման ծրագրերի մշակման և իրականացման բաժնի պետ
-- մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության պետ
-- մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության գլխավոր մասնագետ

-- մարզպետի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ

— մարզպետի աշխատակազմի զորահավաքային նախապատրաստության բաժնի պետ

--մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության պետ

-- <<Վեոն Արմենիա>> ՓԲԸ հարավ բաժին ցանցերի շահագործման ուղղության պետ

-- ՀԵՑ ՓԲԸ <<Արաքս>> մասնաճյուղ Եղեգնաձորի էլ. ցանցի տնօրեն

-- ՀԵՑ ՓԲԸ <<Արաքս>> մասնաճյուղ Վայքի էլ. ցանցի տնօրեն

-- <<Գազպրոմ Արմենիա>> ՓԲԸ Վայոց Ձորի ԳԳՄ տնօրեն

-- Սննդամթերքի անվտանգության և անասնաբուժական պետական տեսչության ՎՁՄ կենտրոնի տնօրեն

-- <<<Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն>> ՊՈԱԿ <<Վայոց ձոր>> մասնաճյուղի տնօրեն